

# ԽՆԴԻՐՆԵՐ

Խնդիրների լուծման համար տրվում է 75 րոպե

3-4-րդ դասարաններ


- հաշվիչ օգտագործել չի թույլատրվում.
- յուրաքանչյուր խնդրի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը.
- չլուծված խնդրի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում.
- մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 96 միավոր.
- մրցույթի ավարտին խնդիրների թերթիկը մնում է մասնակցի մոտ.
- գլխավոր պահանջը մրցույթի մասնակիցներից և կազմակերպիչներից հանձնարարությունը ինքնուրույն և ազնիվ կատարելն է:

## 3 միավոր գնահատվող խնդիրներ

1. Արամը գրում է KANGAROO բառը՝ օրական գրելով մեկ տառ: Նա սկսում է չորեքշաբթի օրը: Շաբաթվա ո՞ր օրը Արամը կավարտի այդ բառը գրելը:

- (A) երկուշաբթի (B) երեքշաբթի (C) չորեքշաբթի  
(D) հինգշաբթի (E) ուրբաթ

2. Քարանձավաբնակ մարդն ուզում է հավասարակշռել քարերի երկու կույտ: Քարերից ո՞րը նա պետք է դնի աջ կողմում, որպեսզի երկու կողմերն էլ ունենան նույն կշիռը:



- (A) 5կգ (B) 7կգ (C) 9կգ (D) 11կգ (E) 13կգ

3. Խաղալիքը գտնվում է քառակուսու ներսում, ինչպես ցույց է տրված նկարում: Երեխան մի քանի անգամ խաղալիքը մի վանդակից մյուսն է տեղաշարժում՝ հետևյալ հաջորդականությամբ. նախ դեպի աջ, հետո վեր, այնուհետև ձախ, հետո ներքև, ապա էլի աջ: Բերված նկարներից որո՞ւմ է ճիշտ պատկերված խաղալիքի վերջնական դիրքը:




- (A) (B) (C) (D) (E)

4. Մարգինն արթնացել է մեկ ու կես ժամ առաջ: Երեք ու կես ժամ հետո նա գնացքով կմեկնի իր տատիկի մոտ: Գնացքը մեկնելուց քանի՞ ժամ առաջ է նա արթնացել:

- (A) 2 ժամ (B) 3 ու կես ժամ (C) 4 ժամ  
(D) 4 ու կես ժամ (E) 5 ժամ

5. Մարիամը նկարագրեց նկարում բերված հինգ պատկերներից մեկը՝ հետևյալ ձևով. այդ պատկերը քառակուսի չէ: Այն մոխրագույն է, եռանկյուն է կամ կլոր: Պատկերներից ո՞րն է նկարագրել Մարիամը:



- (A) A (B) B (C) C (D) D (E) E


6. Հասմիկը երեք պաղպաղակի համար վճարել է 450 դրամ: Միքայելը երկու կարկանդակի համար վճարել է 240 դրամ: Որքա՞ն է վճարել Դավիթը մեկ պաղպաղակի և մեկ կարկանդակի համար:

- (A) 170 դրամ (B) 190 դրամ (C) 220 դրամ (D) 270 դրամ (E) 390 դրամ

7. Պատի ժամացույցը, յուրաքանչյուր ժամը լրանալիս (օրինակ՝ ժամը 8:00-ին, 9:00-ին, 10:00-ին), խփում է ժամերի թվին համապատասխան անգամ: Այն նաև մեկական անգամ խփում է յուրաքանչյուր կես ժամը մեկ (օրինակ 8:30-ին, 9:30-ին, 10:30-ին): Քանի՞ անգամ կխփի ժամացույցը 7:55-ից մինչև 10:45-ը:

- (A) 6 (B) 18 (C) 27 (D) 30 (E) 33

8. Պատկերներից որի՞ մակերեսն է ամենամեծը:




## 4 միավոր գնահատվող խնդիրներ

9. Չվերը տեղավորում են 6 կամ 12 տեղանոց արկղերի մեջ: Ամենաքիչը քանի՞ արկղում կարելի է տեղավորել 66 ձուն այնպես, որ արկղում դատարկ տեղ չմնա:

- (A) 5 (B) 6 (C) 9 (D) 11 (E) 13

10. Դասարանի յուրաքանչյուր աշակերտ ունի առնվազն մեկ, բայց՝ երկուսից ոչ ավել, տնային կենդանի: Նկարում պատկերված են նրանց բոլորի ունեցած տնային կենդանիները միասին: Աշակերտներից երկուսն ունեն և՛ շուն, և՛ ձկնիկ: Նրանցից երեքն ունեն կատու և շուն: Մնացածն ունեն մեկական կենդանի: Քանի՞ աշակերտ կա դասարանում:




- (A) 11 (B) 12 (C) 13 (D) 14 (E) 17

11. Կարենի գրպանում կա 13 մետաղադրամ, յուրաքանչյուրը 5 կամ 10 դրամ արժողությամբ: Բերված թվերից ո՞րը չի կարող լինել Կարենի գրպանի եղած մետաղադրամների արժեքների գումարը:

- (A) 80 (B) 60 (C) 70 (D) 115 (E) 125

12. Նկարի վրա պատկերված թուղթը ծալում են նշված սև գծի երկայնքով: Տառերից ո՞րը չի ծածկվի մոխրագույն քառակուսով:

- (A) A (B) B (C) C (D) D (E) E



13. Արսենը, Բարկենը, Գագիկը, Դավիթը, Երվանդը և Զավենը գառ են գցում: Յուրաքանչյուրի գցած թիվը տարբերվում է մնացածից: Արսենի թիվը երկու անգամ մեծ է Բարկենի թվից:


Արսենի թիվը երեք անգամ մեծ է Գագիկի թվից:  
Դավիթի թիվը չորս անգամ մեծ է Երվանդի թվից:  
Ի՞նչ թիվ է գցել Զավենը:

- (A) 2 (B) 3 (C) 4 (D) 5 (E) 6

14. Վիկտորինա-մրցույթի կանոնները հետևյալն են. յուրաքանչյուր մասնակից ստանում է նախնական 10 միավոր և պետք է պատասխանի 10 հարցի: Ամեն ճիշտ պատասխանի համար նրան տրվում է մեկ միավոր, իսկ ամեն սխալ պատասխանի համար հանվում է մեկ միավոր: Մրցույթի ավարտին տիկին Միմոնյանը վաստակել էր 14 միավոր: Քանի՞ սխալ պատասխան էր նա տվել:

- (A) 7 (B) 4 (C) 5 (D) 3 (E) 6

15. Լաբիրինթոսի յուրաքանչյուր քառակուսու կա պանրի մի կտոր: Մկնիկն ուզում է մտնել լաբիրինթոս և դուրս գալ այնտեղից՝ վերցնելով հնարավորինս շատ պանրի կտորներ: Նա չի կարող երկու անգամ կանգնել նույն քառակուսու վրա: Ամենաշատը քանի՞ կտոր պանրի կարող է հավաքել մկնիկը:



- (A) 17 (B) 33 (C) 37 (D) 41 (E) 49


16. Երեկույթի ժամանակ երկու միանման տորթերից յուրաքանչյուրը բաժանեցին չորս հավասար մասերի: Հետո ստացված ամեն մի կտորը բաժանեցին նա երեք հավասար մասի: Մասնակիցներից յուրաքանչյուրը վերցրեց մեկական կտոր, և վերջում մնաց տորթի երեք կտոր: Քանի՞ մարդ էր մասնակցում երեկույթին:

- (A) 24 (B) 21 (C) 18 (D) 27 (E) 13

**5 միավոր գնահատվող խնդիրներ**

17. Չորս աղջիկ՝ Մարինեն, Լուսինեն, Կարինեն և Տաթևիկը, նստած էին նստարանին: Առաջինը տեղերով փոխվեցին Մարինեն և Կարինեն, հետո Կարինեն տեղը փոխեց Տաթևիկի հետ: Դրանից հետո աղջիկները նստած էին նստարանին այնպես, ինչպես ցույց է տրված նկարում՝ Մարինեն, Լուսինեն, Կարինեն և Տաթևիկը: Ի՞նչ հաջորդականությամբ էին նստած նրանք սկզբում, ձախից աջ ուղղությամբ հաշված:

- (A) Մարինեն, Լուսինեն, Կարինեն, Տաթևիկ  
(B) Մարինեն, Կարինեն, Տաթևիկ, Լուսինեն  
(C) Կարինեն, Լուսինեն, Տաթևիկ, Մարինեն  
(D) Լուսինեն, Մարինեն, Կարինեն, Տաթևիկ  
(E) Տաթևիկ, Մարինեն, Լուսինեն, Կարինեն





18. Նկարում պատկերված էլեկտրոնային ժամացույցը ցույց է տալիս ժամանակը երկու տարբեր թվանշաններով: Օրվա ընթացքում քանի՞ անգամ բոլոր չորս տեղերում կլինեն նույն թվանշանները:



- (A) 1 (B) 24 (C) 3 (D) 5 (E) 12

19. Նկարում պատկերված է չորս միանման զանգեի որոշակի դասավորություն: Զանգերից յուրաքանչյուրի հակադիր կողմերի կետերի գումարը հավասար է 7-ի: Ի՞նչ տեսք ունի տվյալ դասավորությունը հակառակ կողմից:





20. Նկարում ցույց է տրված երեք քարտ: Դրանցից կարելի է կազմել տարբեր թվեր, օրինակ՝ 989 կամ 986: Քանի՞ տարբեր եռանիշ թիվ կարելի է կազմել այդ երեք քարտով:




- (A) 4 (B) 6 (C) 8 (D) 9 (E) 12

21. Անդրանիկն ուզում է հավաքել նկարի վրայի պատկերը՝ օգտագործելով բերված կտորներից որևէ մեկը մի քանի անգամ: Այդ կտորները չի կարելի դնել իրար վրա: Բերված կտորներից ո՞րը նա չի կարող օգտագործել նկարի պատկերը ստանալու համար:




22. Նկար 1-ում ցույց տրված ամրոցը կառուցված է խորանարդներից: Նկար 2-ում պատկերված է ամրոցը՝ վերևից: Քանի՞ խորանարդ է պահանջվել ամրոցի կառուցման համար:




- (A) 56 (B) 60 (C) 64 (D) 68 (E) 72

23. Նկարի շրջանակներից երեքում Արամը գրել է 6, 7 և 8 թվերը: Մնացած շրջանակներում նա պետք է գրի 1, 2, 3, 4 և 5 թվերն այնպես, որ քառակուսու յուրաքանչյուր կողմի վրա գրված թվերի գումարը հավասար լինի 13-ի: Այդ դեպքում որքա՞ն կլինի մոխրագույն շրջանակներում գրված թվերի գումարը:



- (A) 12 (B) 13 (C) 14 (D) 15 (E) 16

24. Մոնան նկարել է վեցանկյուններից կազմված երեք պատկեր՝ ինչպես ցույց է տրված նկարում: Նա նույն սկզբունքով շարունակում է նկարել պատկերներ: Քանի՞ վեցանկյուն կլինի հինգերորդ պատկերում:



- (A) 37 (B) 49 (C) 57 (D) 61 (E) 64